## 15. ԱԲՈՒ-Լ-ՄԱ-ԱՄՐԱՆԻ ՄԶԿԻԹ

**161. ԱԲՈՒ-Լ-ՄԱ-ԱՄՐԱՆԻ ՄԻՆԱՐԸ.** *արտաքուստ. Քեյ-Սուլթանի պարսկերեն արձանագրության տակ. բնագիրը՝ ըստ Քյուրքչյանի լուսանկարի, որը կատարել է մինարեն փլելուց առաջ. արձանագրության բեկորները հայտնաբերվել են 1911 թ. պեղումների ժամանակ.*



ՈՐ ՀԱՍՏԱՏ ՊԱՀԵՆ ԱԻՐՀՆԻՆ ՅԱՅ. ԱՄԷՆ:

Հրատ. Բասմաջեան, № 32։
Լուսանկ. տախտ. XX, 8.

## 16. ՍԻԹԻ ՊԱՀԼԱՎՈՒՆՈՒ ԵԿԵՂԵՑԻ

**162. ՍԻԹԻ ՊԱՀԼԱՎՈՒՆՈՒ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ. երեսպատման վեց քարերի վրա. այն քարերը, որոնց վրա փորագրված են եղել 5—7 և 8—9 տողերի վերջավորությունները՝ չեն պահպանվել. հայտնաբերված են 1907 թ. պեղումների ժամանակ.*



Ի ԹՎԻՆ :ՈՄԹ: ՇՆՈՐՀԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ, ՅԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՍ ՄԱՆԴԱՏՈՐԹ/ԱԽՈՒ-ՑԵՍ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ՇԱՀՆՇԱՀ ԶԱՔԱՐԻԱՒ. ԵՍ ՍԻ/ԹԻ Շ . . . Ի, ԶԻՒԳԱԿԻՑ ԳՐԻԳՈՐԻ ՄԵԾԱՒ ՅՈՒՍՈՎ, ԵՒ ՊԱՐՈՆ/ԱՑ ՀՐԱՄԱՆՍԻՒՆ ՎԵՐՍՏԻՆ ՇԻՆԵՑԻ ԶԱՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ Ի ՀԱԼԱԼ ԱՐ/ԴԵԱՆՑ ԱՌՆ, ԻՄՈ ՎԱՍՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀՈԳՈՅ ՆՈՐԱ ԵՒ Ի ՅԻՇԱՏԱԿ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ ԶԱՒԱԿԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ ԹՈՌԱՆՑ ՄԵՐՈՑ. ԵՒ ՓՈԽԱՐԷՆ/ ՍՊԱՍԱՒՈՐՔ ՍՈՐԱ ՀԱՍՏՈՒՑԻՆ ԷՐԿՈՒ ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ՍՈՒՐԲ/ . . . ՅԱՆՈՒՆ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԻՄՈՑ ԿԱՏԱՐԵԼ ՂԱՐՓԻՆ ՍՊԱՆԵԼՈՅՆ Ի ՊԱՏԵՐԱԶՄԻ:

Լուսանկ. տախտ. XVIII.

**163. ՍԻԹԻ ՊԱՀԼԱՎՈՒՆՈՒ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ. երեսպատման վեց քարերի վրա. այն քարից, որի վրա փորագրված են եղել 7—10 տողերի վերջավորությունները՝ պահպանվել են միայն բեկորներ, հայտնաբերված են 1907 թ. պեղումների ժամանակ։*



Ի :ՈՀԵ:/ ԵՍ ՏԷՐ ԳՐԻԳՈՐ ԹՈՂԻ ԶՀԱՐԿ ԹԱՂՄԱ/Ն ՔԱՀԱՆԱՒՅՍ ԱՆՈՅ. ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔ ՍՈՒՐԲ ԵԿԵՂ/ԵՑՈՅՍ ՊԱՐՏԻՆ ԶԱՒԱԳ :Ե: ՇԱԲԱԹՆ ՊԱՏԱՐԱԳՍ/Ն ԳՐԻԳՈՐԻ ԶՇԱԲԱԹՆ, ԱՒՐՆ ԳՐԻԳՈՐԱՅ ԵՒ ՍԻ/ԹԷ: ԱՐԴ ԵԹԷ ՈՔ ԶՅԻՇԱՏԱԿՍ ՄԵՐ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ ԵՒ ՈՐՔ ՀԱՍՏԱՏ: ՊԱՀԵՆ ԱԻՐՀՆԵԱԼ ԵՂԻՑԻՆ ՅԱՅ ԵՒ Ի ՍՐԲՈՑ ՆՈՐԱ:

Լուսանկ. տախտ. XVIII.

**164. ՍԻԹԻ ՊԱՀԼԱՎՈՒՆՈՒ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ. երեսպատման երկու քարի վրա. արձանագրության վերջին մասը չի պահպանվել. հայտնաբերված է 1907 թ. պեղումների ժամանակ.*